ՏԵՂԵԿԱՆՔ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնությամբ առաջին ընթերցման ներկայացրած և լրամաշկված «Թանգարանների մասին» օրենքի նախագծի փոփոխվող հոդվածների վերաբերյալ (փաստաթղթային կոդ՝ Կ-717-20.11.2023-ԳԿ-011/0)

Հոդված 12. Թանգարանային առարկաների և հավաքածուների մատչելիության ապահովումը և հանրայնացման (հրապարակման) իրավունքը

1. Թանգարանային առարկաները և հավաքածուները հասանելի են հանրության համար՝ բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

2. Հայաստանի Հանրապետության ազգային թանգարանային հավաքածույում ընդգրկված թանգարանային և մշակութային արժեք ներկայացնող առարկաների վերաբերյալ տեղեկությունները կարող են տրամադրվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի պաշտպանության նպատակով:

3. Թանգարանից օգտվողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են **թանգարանների ներքին կանոնակարգով: Թանգարանների ներքին կանոնակարգի** օրինակելի ձևը հաստատում է լիազոր պետական մարմինը:

4. Թանգարանի գույքամատյանը հասանելի է միայն թանգարանի ղեկավարին և գլխավոր ավանդապահին (ֆոնդապահ): Գլխավոր մատյանին հասանելիություն թույլատրում է լիազոր պետական մարմի կողմից: Գույքամատյանում գրանցումներ կատարում է միայն թանգարանի գլխավոր ավանդապահը:

5. Թանգարանային առարկաների և հավաքածուների հասանելիությունը կարող է սահմանափակվել՝

1) դրանց պահպանվածության ոչ բավարար վիճակի դեպքերում,

2) դրանց վերականգնման ընթացքում լինելու դեպքում:

6. Բացառությամբ «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» օրենքով նախատեսված դեպքերի՝ թանգարանային առարկաների և հավաքածուների, թանգարանի շենքերի կամ նրա համալիրի մասերի գծապատկերները, տեսապատկերները, կրկնօրինակները և դրանց վերաբերյալ տեղեկույթը գովազդային նպատակով, որպես խորհրդանիշ՝ հուշանվերների կամ այլ ապրանքների արտադրության համար տրամադրելը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կատարվում է պետական և համայնքային թանգարանների դեպքում լիազոր մարմնի համաձայնությամբ, իսկ ոչ պետական թանգարանների դեպքում՝ սեփականատիրոջ կամ գործադիր մարմնի ղեկավարի թույլտվությամբ:

7. Այն թանգարանային շենքերը, որոնք պատմամշակութային հուշարձաններ են, երրորդ անձանց կողմից դրանց ֆոտոպատկերները, տեսապատկերները կամ գծապատկերները գովազդային նպատակով որպես խորհրդանիշ, պիտակ, հուշանվերների և այլ ապրանքների արտադրության համար օգտագործելը կատարվում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքով սահմանված կարգով:

8. Արգելվում է թանգարանին հանձնված շենքերում և տարածքներում իրականացնել այնպիսի գործունեություն, որը կարող է վտանգել թանգարանային առարկաները և հավաքածուն կամ հակասում է թանգարանի ***օգտագործման*** նպատակներին:

Հոդված 20. Թանգարանների օգտագործումը

1. Թանգարանները գերազանցապես օգտագործվում են գիտական, կրթական, մշակութային, զբոսաշրջային, ***ժամանցային*** և բնապահպանական նպատակներով, ինչպես նաև իրենց գործառնական նշանակությամբ:

2. Թանգարանների օգտագործումը տնտեսական նպատակներով թույլատրվում է, եթե այդպիսի օգտագործումը չի խոչընդոտում բուն թանգարանի գործունեությանը: